

# ԴԵՊՈՒ ԵՐԿԻՐ

Գրեց՝ Յ. Պ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Այն օրէն ի վեր երբ համայնա-  
վար Ռուսաստանն իր հաւանու-  
թիւնն յայտնեց Հայաստանի ներ-  
գաղթին համար, ուրախառիթ  
լուրը համաճարակի համեմատու-  
թեամբ վարակեց արտաշխարհի  
հողմացրիւ հայութիւնը: Քիչ յե-  
տոյ Հայաստանէն հասաւ քակ-  
ուած լեզուներու եղբայրական  
սրտարուխ հրաւէրը — դէպի՛  
Հայաստան: Խօսելու արտօնուած  
բերաններ աշխարհի չորս հովե-  
րուն ցրուած իրենց եղբայրները  
տուն կը կանչեն սլաղատանքով:  
Կը տեսնուի որ հրաւէրը ներսէն  
կու դայ: Այսօր, Արարատը, Հա-  
յաստանի բանաստեղծներու վըր-  
ձինին տակ աւելի գունաւորուած  
ու գեղեցկացած կը թուի. ու,  
ինչո՞ւ չէ, Արարատն անգամ իր  
ձիւնածածկ գաղաթը երկնքի ամ-  
պերուն դէմ բացած՝ իր բախտա-  
գուրկ գաւակները տուն կը կան-  
չէ... Այս ցնծադին շարժումը  
կատարեալ դարձնելու համար,  
պէտք է աւելցնել կորովի Ակնու-  
նիին սրտաղեղ խօսքը — «Դէպի  
Երկիր»...

Որո՞նք պիտի երթան երկիր:

Անտարակոյս, առաջին հերթին  
պիտի երթան այն հայերը, որոնք  
աւելի մօտ կը դանուին Հայաս-  
տանի երկրային դիրքով եւ ո-  
րոնք մեր ազգին դիտուն կրկնը-  
ւած աղէտին զոհերն եղած են,  
կորսնցնելով իրենց բովանդակ  
տնտեսութիւնը՝ ենթարկուած են  
ասղանդական անստոյգ եւ քայ-  
քայող կեանքի մը: Առաջին հեր-  
թին մէջ կ'իյնան նաեւ այն հա-  
յերը, որոնց հանդէպ հիւրընկա-  
լող երկիրը ծուռ եւ անբարեա-  
ցակամ դիտաւորութիւններ կը  
սնուցանէ ու իրենց ներկայու-  
թիւնը անբաղձալի կը դանէ:

Յետոյ, Հայաստան պիտի եր-  
թան այն անձերը, որոնք դեռ ե-  
րիտասարդ են եւ ընդունակ՝ երկ-  
րի վերաշինութեան վիթխարի  
գործին օգտակար հանդիսանա-  
լու: Երիտասարդ հայերը, եթէ  
իրենց ունէ մասնագիտական ըն-  
դունակութեան միացնեն հայու  
մշտալատ հայրենասիրութիւնն ու  
նուիրումը, երկրին համար կը  
դառնան կազմական ջիղեր: Հա-  
յաստան զնացողները լոկ այցե-  
լութեան մտքով ճամբայ իյնալու  
չեն, եւ ո՛չ ալ ձիւնածածկ Արա-  
րատն ու պատմական աւերակնե-  
րը տեսնելու ցանկութիւնը զի-  
րենք ոտքի հանելու է: Ամէն գը-  
նացող պէտք է պատրաստակամ  
ըլլայ գործի եւ զոհաբերութեան

Մանաւանդ Հայաստան երթա-  
լու չեն անոնք որ օտար երկրի մը  
մէջ ապրուստի միջոց ունին եւ  
կը դանուին առաջացած տարիքի  
մէջ: Հայաստան ձերանոց չէ:

Տրուած ըլլալով, որ Ռուսական  
տիրապետութեան տակ դանուող  
երկիրներու մէջ անհատական դը-  
քամագլուխի շահարկութեան եւ  
գարգացումի հնարաւոր պայման-  
ներ կը պակսին, հազիւ թէ նիւ-  
թապէս պատրաստուած հայեր  
Հայաստան երթան այս նպատա-  
կով եւ գերձ մնան քայքայող յու-  
սախտքումէ:

Յայտնի է որ Ռուսաստանի  
տիրապետութեան տակ դանուող  
երկիրները կը դանուին տնտեսու-  
պէս յետամնաց վիճակի մէջ: Հա-  
կառակ թափուած ճիգերուն եւ  
խթանուած սյժերուն, այս լայ-  
նածաւալ աշխարհամասը դեռ հա-  
սած չէ եւրօպական գարգացու-  
մի շափանիչին: Այնքան ընդար-  
ձակ հողերու արդանդներուն մէջ  
կը դանուին ահադին հարստու-  
թիւններ, որոնք ճարտար եւ գոր-  
ծող ձեռքերու կը կարօտին:

Ահա այս եւ ուրիշ պատճառ-  
ներով է, որ Ռուսաստանը Հա-  
յաստանի բերնով հայերուն ներ-  
գաղթի հրաւէր կը կարդայ: